

«Վավերացնում են»

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ռ. Քոչարյան

26 ապրիլի 2006 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

6 ապրիլի 2006 թվականի N 498-Ն

**509 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵԱԲԵՐԻ 15-Ի N 2228-Ն ՈՐՈՇՄԱՆ\* ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի «Ռադիոսարքավորումների և հեռահաղորդակցության վերջնականացման սարքավորումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2228-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

որոշման հավելվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին կետի «ե», «զ», «ը» և «թ» ենթակետերում նշված սարքավորումները ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստման:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2006 թվականի հուլիսի 18-ից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ա. Մարգարյան**

2006 թ. ապրիլի 22  
Երևան